


Մայր

հայրենեկիւմ



ՄԱՇՏՈՑՑԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՆՈՐ ԴԱՓՆԵԿԻՐԸ (Հայագետ դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյան)

1974 թ. հունիսի 19-ին Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի անունը կրող դպրոցի բակում Հայկական ՍՍՀ Միահատրների սովետի կողմից հայագիտական առավել աչքի ընկնող աշխատությունների համար սահմանված **Մաշտոցյան մրցանակը** Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի կողմից հանձնվեց բազմալատուսկ պատմաբան և աղբյուրագետ դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյանին:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ սահմանված մրցանակի երկրորդ դասի նեկիրը դարձավ Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հայ ժողովրդի միջին դարերի պատմության բաժնի վարիչ դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյանը՝ հայագիտության վերջին տարիների մեծագույն նվաճումներից մեկը հանդիսացող իր «**Կանոնագիրք հայոց**» երկհատոր արժեքավոր աշխատասիրության համար: Տարիներ առաջ նույն մրցանակի առաջին դասի նեկիրն էր դարձել Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս ձեռագրագետ, պատմաբան-բանասեր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանն իր կազմած բազմահատոր հայերեն ձեռագրերի հիշատակարանների կրթողային գործի համար:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց ընթերցասրահում միշտ կարելի է տեսնել իր մնայուն անկյունն ունեցող, ջղուտ դեմքով ու պրպտող աչքերով, համառ ու տքնաջան աշխատող, միշտ երիտասարդ ու միշտ որոնող հայագետին՝ Վազգեն Հակոբյանին:

Նրա կյանքի ուրախության աղբյուրը հայ ձեռագրերի աշխարհն է և նրանցում կատարած իր աղբյուրագիտական հայտնաբերությունները: Եվ իսկապես ինչքա՞ն մեծ թիվ են կազմում մեր միջնադարյան այն սկզբնաղբյուրները, որոնք, շնորհիվ Վազգեն Հակոբյանի աշխատանքների, դուրս եկան մոռացությունից և պատշաճ բնագրագիտական համեմատություններով ու ճշգրիտումներով և արժեքավորումներով ի սպասս դրվեցին հայագիտությանը:

Վազգեն Արտաշեսի Հակոբյանը ծնվել է 1913 թ. փետրվարի 14-ին Հայաստանի այժմյան Ղուկասյանի շրջանի Չողի (այժմ՝ Լեռնագյուղ) գյուղում: Իր նախնիները գաղթել էին հասեմից: Վազգենը փոքրուց իր գրքասիրությունը ժառանգեց պապից՝ տ. Հակոբ քահանայից, և մորից՝ Մագթաղից, որոնք օժտված են եղել բացառիկ ուսումնատենչությամբ և հայրենասիրությամբ: Ապագա հայագետը հազիվ 7 տարեկան էր, երբ 1920 թ. պատերազմների ընթացքում որբացավ իր հորից և պապից, որոնք զոհ դարձան թուրքական ներխուժմանը: Սակայն ուսման ծարավի մանուկը, իր վերածնվող հայրենիքում, հնարավորություն ունեցավ ավարտելու Լեռնիականի Մոսկվայի անվան մանկավարժական տեխնիկումը և ապա կարճ ընդմիջումից հետո, 1936 թ., ընդունվելու Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտեց 1941 թ. գերագանցության դիպլոմով: Նա ուսանող էր, երբ ձեռնամուխ է լինում գիտա-հետազոտական աշխատանքի և

1941 թ., ստացին անգամ լինելով, տպագրում իր առաջին գիտական ընդարձակ ուսումնասիրությունը (հեղինակակցությամբ Հ. Ութմազյանի)՝ նվիրված 18-րդ դարի հայ ազատագրական շարժման կենտրոններին

պետական համալսարանում՝ հայ ժողովրդի պատմության գծով, և ստացավ հայագիտական խնամված պատրաստություն մեծանուն հայագետ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի շնչի տակ:



Գոկոս.-պրոֆ. Վազգեն Հակոբյանն աշխատելիս

և նրանց ծրագրերին¹: Հակոբյանն ապա անցել է մանկավարժական աշխատանքի Մեծ Ծահրիար գյուղի դպրոցում՝ իբրև տնօրեն և պատմության ուսուցիչ:

1942 թ. Հայրենական մեծ պատերազմի օրերին Հակոբյանը զորակոչվել է բանակ, որ վիրավորվելուց հետո՝ զորացրվել է: 1943—1957 թթ., շուրջ 14 տարի, Հակոբյանը դարձյալ զբաղվել է մանկավարժությամբ՝ իբրև պատմության ուսուցիչ Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցում:

Հակոբյանն իր մանկավարժական աշխատանքներին զուգահեռ 1944—1947 թթ. կարողացավ դառնալ ասպիրանտ Երևանի

Հայագետ Հակոբյանի համար հատկապես շատ արգասաբեր եղան Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում անցկացրած տարիները, որ նա աշխատում է սկսած 1947 թ. ապրիլից առ այսօր: Այստեղ է, որ նա իր բացառիկ ջանասիրությամբ խորացավ ու հմտացավ գիտա-հետազոտական աշխատանքների մեջ և ապրեց իր միանգամայն ուսանելի շեշտակի վերելքը: Նա 1948 թ. փալլուն կերպով պաշտպանեց իր թեկնածուական ավարտաճառը՝ նվիրված «Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատության հայկական թարգմանության ընդարձակ բնագրին և հայկական մեկնություններին»: 1951 թ. Հակոբյանը ստացավ նաև ավագ գիտական աշխատողի պատվավոր կոչում: Բացառիկ խստապահանջության և համեստության տեր գիտնականը, որ արդեն իսկ ճանաչված դեմք էր հայագիտության մեջ իր հեղինակած մեծագրական հատորներով և գիտական բազմաթիվ հոդվածներով, մի-

¹ Հ. Ութմազյան և Վ. Հակոբյան, Հայ ազատագրական զաղապարների երկու կենտրոն և երկու ծրագիր XVIII դարի երկրորդ կեսին, Երևանի պետ. համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», № 3, 1941, էջ 71—161:

այն 1967 թ. հանդես եկավ իր դոկտորական ավարտաճանտի պաշտպանությունը, որը նշվիրված էր «Կանոնագիրք հայոց»-ը և նրա խմբագրությունները» թեմային:

1974 թ. հունիսի 19-ին Օջականում Վ. Հակոբյանին շնորհվեց հայագիտության բարձրագույն պարգևը՝ Մաշտոցյան մրցանակը...

Վազգեն Հակոբյանը 1971 թ. նոյեմբերից սկսած առ այսօր ղեկավարում է Պատմության ինստիտուտի հայ ժողովրդի միջին դարերի պատմության բաժինը և իր կարևոր մասնակցությունն է բերում հայագիտական նոր ուժերի պատրաստման շնորհակալ գործին: Նա միաժամանակ 1969—1974 թթ. դասախոսել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի տարբեր ֆակուլտետներում: 1972 թ. սեպտեմբերին Հակոբյանին շնորհվեց պրոֆեսորի կոչում: Նա ընտրվել է նաև Պատմության ինստիտուտի, ինչպես նաև պետական համալսարանի հայագիտական կենտրոնի գիտական խորհուրդների անդամ:

Վազգեն Հակոբյանի գիտական առաջին խոշոր նվաճումը պատմական արժեքի մանր ժամանակագրությունների և տարեգրությունների երկու ծավալուն հատորների պատրաստումն ու հրատարակումն էր: Նրանք լույս տեսան Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակությամբ, իբրև «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարի երրորդ և յոթերորդ հատորներ 1951 և 1956 թթ.: «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» խորագրով: Այս հատորներն ընդգրկում են 1151 էջ (455+XI+685): Հիշյալ երկու սովոր հատորներում ի հայտ են եկել 85 մեծ և փոքր ժամանակագրություններ և տարեգրություններ, որոնցից 55-ը առաջին անգամ ուսումնասիրվել և հրատարակվել են Հակոբյանի ջանքերով, 5-ը՝ հրատարակվել են նորահայտ բնագրերի հիման վրա և կամ մի քանի այլ տարբերակների միջոցով, իսկ մնացյալ բնագրերն էլ ճշգրտվել և լրացվել են: Աշխատասիրողը հիշյալ հատորների պատրաստման համար ոչ միայն չի գոհացել Մաշտոցյան Մատենադարանի հազարավոր ձեռագիր գանձերի զրննումով, այլև նոր որոնումներ է կատարել նաև Մոսկվայի Լենինի անվան, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարաններում և Արևելագետների ինստիտուտում, ինչպես նաև Բաքվի և Թբիլիսիի թանգարաններում:

Երկու հատորներն էլ վերջում ունեն օտար բառերի բառարան, աշխարհագրական անունների, անձնանունների և առարկայական ցանկեր:

Վազգեն Հակոբյանի «Մանր ժամանակա-

գրություններ XIII—XVIII դդ.» երկհատոր գործի մասին գնահատականի տողեր են հրատարակել Լևոն Մելիքետ-Քեյլը, Վ. Ոսկանյանը, Էմ. Պիլագյանը և Բ. Ներսես Ալիկյանը:

Առանց դադարի մեղվաշանորեն աշխատող հայագետը 1964 թ. շատ ավելի մեծ մի հաղթանակ արձանագրեց իր գիտական կյանքում, որն ինչպես Երևանում, այնպես էլ արտասահմանում համարվեց հայ աղբյուրագիտության ամենախոշոր նվաճումներից մեկը: Հակոբյանի այդ սխրանքը «Կանոնագիրք հայոց»-ի առաջին հատորի լույս ընծայումն էր՝ բաղկացած 822 էջից կամ հեղինակային 60 մամուլից, որը արդյունք էր տասնամյա տիտանական աշխատանքի: Յոթ տարի անց, 1971 թ., հրատարակ հանեց նաև նույն «Կանոնագիրք հայոց»-ի Բ հատորը՝ բաղկացած շուրջ 600 էջից:

«Կանոնագիրք հայոց»-ը հայ ժողովրդի իրավաբանական մտքի հնագույն հուշարձանն է, կանոնների մի ժողովածու, որը, սկիզբ առնելով VIII դարից, շարունակել է իր գոյությունը, մինչև XX դարի սկզբները: Երկար դարեր հայ եկեղեցական այլ ժողովների կողմից սահմանված կանոններն օրենքի ուժ են ունեցել և՛ հոգևորականության, և՛ բովանդակ ժողովրդի համար: Այդ կանոններում պարփակված են հայ վաղ միջնադարի հասարակության ամբողջ կյանքն իր բոլոր ծայքերով: Հատկապես հայ պետականության վերացումից հետո, օտար բռնակալների տիրապետության օրոք, ինչպես նաև հայ գաղթալարներում նրանք անգնահատելի դեր են խաղացել ազգային սովորույթների պահպանման և ազգային ինքնաճանաչման գործում: Հետևաբար «Կանոնագիրք հայոց»-ը մի տեսակ վահան է հանդիսացել օտարացման և ձուլման դեմ: Այն անգնահատելի աղբյուր է ոչ միայն հայ միջնադարյան պատմության, այլ նաև իրավաբանության, փիլիսոփայության, լեզվաբանության, բնական գիտությունների, ճարտասանության, ազգագրության, բժշկության, թատրոնի, ժողովրդի կյանքի ու կենցաղի և այլ հարցերի ու խնդիրների վերաբերյալ: Նա միաժամանակ հսկայական նյութ է բովանդակում հայերի և այլ ժողովուրդների միջև գոյություն ունեցող մշակութային կապերի, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող ներքին հակասությունների և այլ հարցերի վերաբերյալ: Հայկական կանոնների ուսումնասիրությունը կարևոր է նաև այն տեսակետից, որ նրանք հանդիսանում են Սովետական Միության ժողովուրդների իրավագիտական մտքի հնագույն սկզբնաղբյուր, որի գիտական

արժեքը դուրս է գալիս ազգային շրջանակներից»²:

Մինչև Վ. Հակոբյանը, ուրիշներն էլ են գբառվել «Կանոնագիրք հայոց»-ի բնագրի հրատարակման և ուսումնասիրման հարցերով, սակայն ոչ ոքի չի հաջողվել հայագիտությանը պարզել նրա գիտական-քննական ամբողջական բնագիրը: Վ. Հակոբյանը մեկ-մեկակ լծվեց մի աշխատանքի, որն առանց չափազանցության կարելի էր համարել մի խումբ գիտնականների գործ: Նա ոչ միայն կատարեց Մաշտոցյան Մատենադարանում պահվող շուրջ 200 «Կանոնագիրք հայոց»-ի ձեռագիր օրինակները մանրակրկիտ կերպով գննելու հոգևատանջ աշխատանքը, այլև վերջիններից առանձնացրեց իր կողմից ընտիր համարված 47 գրչագրեր (ընդօրինակված XIII—XIX դդ.) տարբեր թերթյաձևերի համար, իսկ իբրև բնագրի հիմք ընդունեց աշխարհում մեզ հասած «Կանոնագիրք հայոց»-ի հնագույն օրինակի մանրալուսանկարները: Այդ գրչագիրը պահվում է Պարսկաստանի Նոր Ջուղայի Ամենակիրկիչ վանքի մատենադարանում (№ 131) և գրված է մետրոպոլիտոսի ուղղագիծ երկաթագրով Հովհաննես գրչի կողմից Կիլիկիայում 1098 թ.: Վ. Հակոբյանը միաժամանակ Կանոնագրի թարգմանական կանոնները համեմատել է հունարեն բնագրերի հետ և մի առ մի նշել նրանց տարբերությունները: Վ. Հակոբյանն իր առաջ խնդիր էր դրել ոչ միայն կազմել «Կանոնագիրք հայոց»-ի գիտական համեմատական բնագիրը, այլև միաժամանակ հայտնաբերել Հովհանն Ծանեցի կաթողիկոսի կողմից VIII դարում կազմված ժողովածուն և նրանից անջատել հետագա դարերում ավելացված բոլոր կանոնները:

Եվ ահա շնորհիվ Վ. Հակոբյանի ավելի քան 15 տարիների սրտամաշ և հեղինակաշխատանքների, հայագիտությունը, առաջին անգամ լինելով, կարողացավ ունենալ «Կանոնագիրք հայոց»-ի քննական բնագիրը, որը մաքրվեց դարերի ընթացքում ստեղծված «Կանոնագիրք հայոց»-ի բազմաթիվ տարատեսակներից, և կանոնագիրքը միաժամանակ վերստացավ Հովհանն Ծանեցու ճշգրտված ժողովածուի նախնական ձևը: Վ. Հակոբյանը Ա. հատորի իր առաջաբանում արժանին է մատուցել իր միջոցով էլ ավելի արժեքավորված հեղինակի՝ Հովհանն Ծանեցի կաթողիկոսի, հայ մեծ երախտավորի կյանքին ու գործին:

«Կանոնագիրք հայոց»-ի Բ հատորը կազմելիս Վ. Հակոբյանն իր առաջ խնդիր էր դրել՝ բացահայտել Հովհանն Ծանեցու կողմից

կազմված կանոնագրքում X—XI դդ. ընթացքում կատարված հավելումները, ի մի բերել դրանք, կազմել նաև վերջիններիս գիտա-համեմատական բնագիրը, ենթարկել ուսումնասիրության և ծանոթագրել: Այս հատորի համար ևս Վ. Հակոբյանն իր օգտագործած 50 ձեռագրերից բացի ծանոթագրությունների համար գնել է 15 գրչագրեր ևս, իսկ իր նոր ներածության և ծանոթագրությունների համար օգտագործել է այլ 49 ձեռագրեր ևս, ինչպես նաև արտասահմանյան գրչագրերի մանրալուսանկարներ:

Ինչպես Ա, այնպես էլ Բ հատորների վերջում իբրև հավելված լույս են ընծայվել զանազան կանոնների հնագույն մագաղաթյա պատառիկ-պահպանակներ: Բացի կցված ծանոթագրություններից, որոնցից յուրաքանչյուրն արժանի է առանձին ուսումնասիրության, երկու հատորներն էլ վերջում օժտրված են կանոնախմբերի առաջաբանների, վերջաբանների և հոդվածների սկզբնատողերի, ինչպես նաև առարկայական, անձանունների և տեղանունների ցանկերով: Եթե Ա հատորում տեղ են գրավել 24 կանոնախմբեր, ապա Բ հատորում մտքը են գործել հետագայում ավելացված, սակայն միջնադարում դարձյալ օրենքի ուժ ունեցող 33 կանոնախմբեր: Երկու հատորներն էլ խմբագրվել են բանասերներ Հ. Անասյանի և Էմ. Պիվազյանի կողմից:

Անհրաժեշտ է նշել, որ քիչ անգամ է պատահել, որ մեր աղբյուրագետ մշակներն այնպիսի համընդհանուր բարձր գնահատանքի են արժանացել, ինչպես այդ կատարվեց Վ. Հակոբյանի նկատմամբ: Հայաստանում ու Մոսկվայում, Կ. Պոլսում և Երուսաղեմում ու մինչև իսկ ԱՄՆ-ում լույս տեսան մեծ թվով դրվատալից գրախոսություններ՝ ստորագրված հայագիտության մասնաշված դեմքերի կողմից, որոնք վերհանեցին կատարված գործի արժեքն ու մեծությունը: «Կանոնագիրք հայոց»-ի մասին երևանում և Մոսկվայում հայերեն և ռուսերեն լեզուներով գրախոսություններով հանդես եկան Սուրեն Արևշատյանը³, Ասատուր Մնացականյանը⁴, Մուշեղ Նարյանը⁵, Լևոն Խաչերյանը՝ երկու անգամ⁶, Բ. Ուլուբաբյա-

³ «Էջմիածին», 1966, № 5, էջ 51—56: Տես նաև «Сов. государства и права», Москва, 1965, № 6.
⁴ «Գրական թերթ», 1965, հունիսի 25, № 26 (1282):
⁵ «Սովետական Հայաստան», օրաթերթ, 1965, հունիսի 9, № 134(13479): Տես նաև նույնից «Բաների Հայաստանի արխիվներ», 1965, № 3, էջ 207—220:
⁶ «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4 (59), էջ 249—256 և «Սովետական Հայաստան», օրաթերթ, 1972, հունիսի 2:

² Ս. Արևշատյան, «Էջմիածին», 1966, № 5, էջ 51:

ընդ և ուրիշներ, իսկ սփյուռքում՝ բազմա-
 վաստակ աներիկահայ բանասեր Հարու-
 թյուն Քյուրտյանը⁷, Կ. Պոլսում՝ Գուրգեն
 Տեր-Վարդանյանը⁸ և ուրիշներ: Հեղինակը
 այս առթիվ ստացել է նաև շնորհավորական
 բազմաթիվ նամակներ արտասահմանյան
 հայ և օտար հայագետներ Հ. Պ. Ութթեհից
 և Ֆրա Ա. Ռընուից (Ֆրանսիա), պրոֆ. Ժե-
 դար Գարիտից (Բելգիա), դոկտ. Էդ. Ծյուցից
 (Հունգարիա) և ուրիշներից, որոնք իրենց
 մեծ գոհունակությունն են հայտնել մեմս
 գործով հայ աղբյուրագիտությունը հարը-
 սանալու առթիվ:

Սակայն Վ. Հակոբյանի երկասիրություն-
 ները չեն ավարտվում վերոհիշյալներով: Նա
 հետազոտողներից մեկն է եղել հայ-ռուսա-
 կան դարավոր բարեկամությունը արտացո-
 լող անհամար վավերագրերի: Նա իր մաս-
 նակցությունն է բերել հանգուցյալ պատմա-
 բան Պ. Հարությունյանի և Ս. Ավակիմովայի
 հետ միասին «XVIII դարի վերաբերյալ
 հայ-ռուս հարաբերությունների պատմու-
 թյանը նվիրված երկհատոր փաստաթղթերի
 ժողովածու»-ներին, որոնք լույս տեսան
 ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատ-
 մության ինստիտուտի հրատարակությամբ
 1964 և 1967 թթ.: իբրև այդ շարքի Բ հատո-
 րի¹⁰ Ա. և Բ¹¹ մասեր, ակադ. Աշոտ Հովհան-
 նիսյանի խմբագրությամբ և առաջաբանով:
 Երկու հատորը միասին ընդգրկում է 820 էջ:
 Հատորներում հավաքված փաստաթղթերը
 տարիների ընթացքում հայտնաբերվել և
 վերծանվել են Մոսկվայի զանազան արխիվ-
 ներից:

Մեարոյ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա-
 կին նվիրված հոդվածների ժողովածուն¹²

ևս, որ լույս տեսավ 1962 թ., կազմվել էր
 դարձյալ Վ. Հակոբյանի կողմից՝ գործակ-
 ցությամբ Հ. Անասյանի և Հր. Բարթիկյանի:

Վերջերս Վ. Հակոբյանը, հեղինակակցու-
 թյամբ պատմական գիտությունների դոկ-
 տոր Լ. Բաբայանի, լույս ընծայեց նաև իր
 ուսուցչին՝ հայագիտության մեծ երախտա-
 վոր ակադ. Հակոբ Մանանդյանին նվիրված
 մի մենագրություն¹³: Այդ էլ առաջին ևրջ
 աշխատությունն է՝ նվիրված բազմավաս-
 տակ մեծ գիտնականի կյանքին ու գիտա-
 մանկավարժական գործունեությանը: Մա-
 նանդյանի երախտագետ աշակերտ Վ. Հա-
 կոբյանը վերջին տարիներին մի քանի հոդ-
 վածներով անդրադարձել էր իր մեծ ուսուց-
 չի կյանքին ու գործունեությանը¹⁴, ¹⁵, ¹⁶:

Վերջերս հրատարակելով վաստակա-
 շատ հայագետի շուրջ 900 էջանոց մեկ նոր
 ստվարածավալ գործը. «Հայերեն ձեռագրե-
 րի ԺԷ դարի հիշատակարանների (1601—
 1620 թթ.)» Ա հատորը, ուր նա իբրև հեղի-
 նակակից հանդես է գալիս հանգուցյալ ակ-
 ադ. Աշոտ Հովհաննիսյանի հետ: Այս գոր-
 ծը, որ ակադ. Լ. Ս. Խաչիկյանի ԺԴ և ԺԵ
 դարերի ձեռագիր հիշատակարանների քա-
 նահատոր ժողովածուների սկզբունքով է
 կազմված, ինչպես նշված է առաջաբանում,
 «Տարիներ առաջ սկսել էր ակադ. Աշոտ
 Հովհաննիսյանը և կիսատ թողել»: Որքան
 մեզ հայտնի է, հանգուցյալ ակադեմիկոսը
 հիշատակարանները հավաքել էր ոչ ամ-
 բողջությամբ, այլ ընտրովի ձևով և կրճա-
 տումներով: Վ. Հակոբյանը աշխատանքը
 ամբողջացրել է իր հիմքից և հասցնելու է
 այն իր ավարտին: Այն քաղկացած է լինե-
 լու հինգ հատորներից, և որոնք, սկսած այդ
 ժողովածուի Բ հատորի մեծ մասից մինչև
 1700 թ., իր տքնաջան ու միայնակ աշխա-
 տանքի արդյունք է լինելու: Այս հատորի
 հիմնական նյութերը քաղված են Մաշտոց-
 յան Մատենադարանի հարուստ ձեռագրե-
 րից, ինչպես նաև տպագիր ու անտիպ ձե-
 ռագրացուցակներից, մամուլից, գիտական
 հանդեսներից, առանձին աշխատություննե-
 րից, Լեհինգրադից, Երուսաղեմից, Վենետի-
 կից և այլ վայրերից ստացված առանձին
 մանրալուսանկարներից: Ա հատորը միայն
 ընդգրկում է 1041 հիշատակարան: Գիրքն
 ունի առաջաբան (Ա.—ԻԶ), ցանկ սույն հա-

⁷ «Գրական թերթ», 1973, մարտի 2, № 10(1681):
⁸ «Սիոն», Երուսաղեմ, 1966, հուլիս, էջ 385—387:
⁹ «Մարմարա», Կ. Պոլիս, 1967, հունիսի 2:
¹⁰ Армяно-русские отношения в первой тре-
 ти XVIII века. Сборник документов, том II,
 часть I, под редакцией Ашота Иоаннисяна,
 изд-во Академии наук Армянской ССР, Ереван,
 1964.
¹¹ Армяно-русские отношения в первой тре-
 ти XVIII века. Сборник документов, том II,
 часть II, под редакцией Ашота Иоаннисяна,
 изд-во Академии наук Армянской ССР, Ереван,
 1967.

¹² Մեարոյ Մաշտոց, հոդվածների ժողովածու,
 Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Պատմու-
 թյան ինստիտուտ, խմբագրությամբ Աշոտ Հովհան-
 նիսյանի: Ժողովածուն հրատարակության պատրաս-
 տեցին, առաջաբանը և անհրաժեշտ ծանոթագրու-
 թյունները գրեցին Վ. Ա. Հակոբյանը, Հ. Ս. Անաս-
 յանը և Հ. Մ. Բարթիկյանը, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատա-
 րակչություն, Երևան, 1962:

¹³ Լ. Բաբայան և Վ. Հակոբյան, Ակադեմիկոս Հա-
 կոբ Մանանդյան, Երևանի համալսարանի հրատա-
 րակչություն, Երևան, 1974:
¹⁴ «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 3,
 էջ 57—74:
¹⁵ Նույն տեղում, 1972, № 3, էջ 153—162:
¹⁶ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հասարակական գիտու-
 թյունների, 1973, № 11, էջ 12—20:

տորի համար օգտագործված աղբյուրների (ԻԷ—ԱԱ), 1601—1620 թթ. ձեռագրերի հիշատակարանները (Էջ 1—755), ժամանակագրական օժանդակ ցանկեր (757—758), օտար բառերի բառարան, ցանկեր անձնանունների, տեղանունների, առարկայական և այլն (759—827): Պարզ է, որ ներկա հատորի և նրա բաղկացուցիչ մասերը կազմող հետագա մյուս չորս հատորների լույսընծայումը անսպառ գանձ է հանդիսանալու հայագիտությանը զբաղվող մասնագետների համար:

Ուսումնասիրողն ուսանելի շատ բան կարող է գտնել նաև Վ. Հակոբյանի թեկուզ փոքրածավալ հոդվածներում, քանի որ նրանք ևս ձեռագրագիտական և պատմաբանասիրական արժեք են ներկայացնում: Նման բնույթի հոդված-հրատարակումներից է «Հեղում պատմիչի նորահայտ հիշատակարանը և նրա պատմական նշանակությունը»¹⁷, «Անանուն ժամանակագրության աղբյուրների մասին կամ Վարդան Արևելցու «Պատմութիւն Տիեզերական»-ի համառոտ խմբագրությունը»¹⁸ հոդվածները: Ուշադրության արժանի կարևոր հոդված-հրատարակում է նաև Վ. Հակոբյանի «Մարտիրոս Երզրնկացու ճանապարհորդական նոթերը (XV դար)»¹⁹: Այստեղ նկարագրված է հայ ճանապարհորդի ուղևորությունը, որ սկսած 1489 թ. մինչև 1496 թ. եղել է եվրոպական բազմաթիվ երկրներում և կանգ առել Ատլանտյան օվկիանոսի ափին: Բացի հուշարձաններից նա նկարագրել է նաև իր տեսած քաղաքներն ու բնակիչներին: Ձեռագրական բնույթի հոդվածներից են նաև նրա «Ժամանակագրական մի փաստի նշուման շուրջը»²⁰ և «Մաշտոցի անվան Մատենադարանի № 1496 ձեռագրի ժամանակի և հեղինակի հարցի շուրջը»²¹ աշխատությունները: Դարձյալ հայ ժողովրդի պատմության հետ է առնչվում Վ. Հակոբյանի «Աշոտի՝ Բագրատունյաց առաջին թագավորի գահակալության թվականը»²² հոդվածը:

Ուշագրավ է նաև նրա «Մատենագիտական տեղեկություններ բույսերի սելեկցիայի

պատմության վերաբերյալ»²³ հոդվածը, որը ոչ միայն կարևոր է հայ այգեգործության և ընդհանրապես բուսաբանության պատմության համար, այլև ունի գործնական նշանակություն:

Վ. Հակոբյանը ջանացել է նաև հայկական աղբյուրներն ի սպաս դնել սովետական տարբեր ժողովուրդների պատմության ամբողջացման համար: Ինչպես իր ուսումնասիրած ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ մանր ժամանակագրություններում նա ուշագրավ տվյալներ է գրտել ուսանելի, ուկրաինացիների և վրացիների անցյալի պատմության վերաբերյալ^{24, 25, 26, 27, 28}:

Վ. Հակոբյանի գիտական վաստակում բավականին կարևոր թիվ են կազմում նաև նրա գրախոսությունները, որոնցից կարևոր մեկ մասը ուսումնասիրական բնույթի են:

Մեծ ջանասիրության տեր գիտնականի վաստակում դեռևս գտնվում են նաև մի շարք անտիպ աշխատություններ: Անտիպների շարքում բացառիկ արժեք է ներկայացնում Վ. Հակոբյանի «Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատության հայ թարգմանության ընդարձակ բնագիրը և այդ աշխատության հայկական մեկնությունները», որը միաժամանակ հանդիսացել է հեղինակի թեկնածուական ավարտանաոր:

Տպագրության համար պատրաստ գործերի շարքում են նաև ԺԷ դարի ձեռագիր հիշատակարանների սուվար 2-րդ և 3-րդ հատորները: Աշխատանքի ընթացքում են նաև «Կանոնագիրք հայոց»-ից դուրս մնացած կանոնական բեկորների ժողովածուն, «Մանր ժամանակագրություններ»-ի 3-րդ հատորը, ինչպես նաև պատմական սկզբնաղբյուրների երկու այլ ժողովածուներ, «Հայ միջնադարյան ճանապարհորդների նոթագրությունները» և «Միջնադարյան փոքր պատմություններ ԺԵ—ԺԸ դդ.» և այլ գործերը:

Վազգեն Հակոբյանը կատարել է նաև բեղմնավոր խմբագրական աշխատանքներ: Ինչպես «Կանոնագիրք հայոց»-ի վրա կատարած նրա աշխատանքները, այնպես

¹⁷ «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների, 1948, № 10, էջ 68—74:

¹⁸ Նույն տեղում, 1949, № 7, էջ 51—62:

¹⁹ Նույն տեղում, 1957, № 6, էջ 97—110:

²⁰ ԱՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտությունների, 1974, № 5, էջ 78—81:

²¹ Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1971, էջ 137—150:

²² «Revue des Etudes Arméniennes», Paris, nouv. serie, t. II, 1965, p. 273—282.

²³ «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների, 1949, № 8, էջ 78—77:

²⁴ Նույն տեղում, 1963, № 2, էջ 45—52:

²⁵ Сборник «Истор. связи и дружбы украинского и армянского народов», Киев, 1965, т. 2, стр. 69—76.

²⁶ Նույն տեղում, Ереван, 1961, т. I, էջ 210—228:

²⁷ «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների, 1964, № 3, էջ 61—70:

²⁸ Նույն տեղում, 1950, № 6, էջ 93—98:

Էլ նրա մյուս հայագիտական գործերը եղել են Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ուշադրության կենտրոնում: Վեհափառ Հայրապետի բարձր հոգատարության շնորհիվ է, որ Նոր Զոռայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանից ստացվեց «Հավանոնագիրք» ձեռագրի լուսանկարներից, մանրածապավենները, որոնք էլ աշխատանքը ավարտելուց հետո Հակոբյանը նվիրել է Մատենադարանին: Այդ ձեռագիրը, ինչպես նշեցինք, աշխարհում մեզ հասած հնագույն օրինակն է «Կանոնագիրք հայոց»-ի և գրված է մեսրոպյան ուղղագիծ երկարագրով 1098 թ. և այն հիմք ծառայեց Վ. Հակոբյանի կողմից պատրաստված գիտական բնագրին: Վեհափառ Հայրապետը 1962 թ. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում, ուր բննարկվում էր «Հայ եկեղեցու Սահմանադրության (Կանոնադրության) մշակման հարցը», իր արտասանած եզրափակիչ խոսքում անդրադարձավ «Կանոնագիրք հայոց»-ին և հավատեց, որ նրա բնագրի կազմման և ուսումնասիրման գործերով է զբաղվում պատմաբան Վ. Հակոբյանը: Վեհափառ Հայրապետի կողմից դեպի Վ. Հակոբյանի գիտական

աշխատանքները ցուցաբերված բարձր վերաբերմունքի լավագույն գրավականն է հանդիսանում վերջերս Նորին Սրբության կողմից տրված գնահատանքի ու օրհնության գիրքը, որով բարձր է գնահատում հայագիտությանը նրա մատուցած ծառայությունները, շնորհավորում Մաշտոցյան մրցանակի դափնեկիր դառնալու ստիժի և մաղթում նորանոր հաջողություններ («Էջմիածին», 1974, № ԺԲ, էջ 3):

Մոտավոր գծերով այս է Մաշտոցյան մրցանակի դափնեկիր, բազմավաստակ հայագետ, համեստ ու աշխատող, պատմաբան և աղբյուրագետ, պատմական գիտությունների դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյանի կյանքի անցած ուղին: Աղմուկից հեռու, նա իր գիտական-ստեղծագործական ծաղկման շրջանն է ապրում: Հայագիտությունը դեռևս շատ ու շատ սպասելիքներ ունի իր հավատարիմ նվիրյալից: Երկար ու առողջ բազում տարիներ և հաջողություններ աննկուն հայագետին, որպեսզի նա իր նորանոր բարձրարժեք երկերով էլ ավելի հարստացնի հայագիտության գանձարանը՝ ի փառս հայ մշակույթի և գիտության:

ՍՈՒՐԵՆ ԲՈՒԱՆԶՅԱՆ

